

Նայն սատրապք նախարարք եւ ազատք, պետք եւ իշխանք, զաւրավարք եւ սահմանապահք, ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեցեն տեսցեն եւ խորհեսցին վասն իւրեանց առաջնորդի, թէ ո՛ւմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն եւ հովուել բանաւոր խաշանց Զրիստոսի: 3 Ապա յաղթեաց կալաւ այս բան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ անդ էին, զի ի մնացորդաց տանն Գրիգորի, յայնմ զաւակէ գտցեն զառաջնորդութիւն: 4 Չի ամենեքեան ասէին ցարթայն. վասն զի նորոգեաց Աստուած զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է ի յայնմ զաւակէ նորոգել զհոգեւոր նահապետութիւնն: 5 Չի ընդ նորոգել այնր արթոռոյ, ասեն, նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Յայոց:

6 Ապա յականէ յանուանէ իսկ ինդրեցին աշխարհաժողով զաւրքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագենի, զթոռն քահանայապետին Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծին առաջնոյ քահանայապետին. եւ մաւր սորա Բամբիշն անուն, քոյր արթային Տիրանայ: 7 Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութեան. ի տղայութենէ սնեալ եւ ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամբրաց ընդ հաւատարիմ վարդապետաւք. եւ ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն զուզակցացն: 8 Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան, ի գործակալութեան սիրելի սենեկապետ արթային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ եւ արտաքոյ:

9 Այր էր սա մեծ եւ բարձր ցանկալի հասակաւ, եւ վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի, տենչալի ցանկալի եւ զարմանալի եւ ահագին ամենայն նայեցող տեսողաց, եւ նախանձելի յարութեանն ի զինուորական կրթութեանն: 10 Երկիւղած ի Տեառնէ Աստուծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր, սուրբ զգաստ, սաստիկ իմաստուն եւ առանց ակնառութեան. իրաւանց իրաւարար, ցածուն քաղցր խոնարհ աղքատասէր, ի սրբութիւնս ամուսնութեանցն արիւնաւոր, եւ կատարեալ սիրովն Աստուծոյ: 11 Եւ առ իւր ընկերս ըստ պատուիրանին սիրել զամենայն ընկեր իբրեւ զանձն. զի ի զինուորութեանն այսպէս կատարեալ էր վարուք լաւութեամբ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ զնայր նա ամենայն պատուիրանաւքն Տեառն եւ արդարութեամբ, անարատութեամբ եւ ամենայն պաշտամամբք առ ընկերս իւր: 12 Անձանձրոյթ էր, եւ ունէր զնախանձն Աստուծոյ, եւ եռայր Սուրբ Յովակիմ. այսպէս իսկ էր ամենայնիւ կատարեալ յամենայնի: 13 Եւ զաղքատս եւ զտառապեալս այսպէս սիրէր եւ ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս եւ զվերակուր հասարակէր ընդ նոսա: 14 Եւ նեղելոց եւ տարակուսելոց աւզնական եւ վերակացու, եւ ջատագով ամենայն զրկելոց լինէր նա: